719. Կոթող, քառակող, սպիտակ մարմարից: Վրան՝ 7 տող. հայերեն և 3 տող ռուսերեն.

ՀԱՆԳԻՍՏ ՈՍԿԵՐԱՑԴ/ ԱՆՈՒՇԻԿ ՄԱՅՐ/ ԵՒ ՔԱՂՑՐԻԿ ՄԱՄԻ/ ՇՈՒՇԱՆ/ ՏԷՐ ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ./ ԾՆ. 1835- ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ:

Ապա՝

ДОРОГОЙ МАТЕРИ/ ШУШАНЫ/ ТЕРЪ-ГАБРИЕЛЯНЦЪ

ԿՈՏՈՎՍԿ/ ՆԱԽԿԻՆ ՀՆՉԵՇՏ, ԳԱՆՁԻԵՇՏԻ/

Մոլդովայի տարածքի աչքի ընկնող հայկական գաղթօջախներից էր Հնչեշտը, որը գտնվում է Քիշնևից հարավ-արևմուտք: Այստեղ ծնվել է Լազարյան ճեմարանի ականավոր մտավորականներից մեկը՝ Մսեր մագիստրոս Մսերյանցը: Քաղաքում և նրա շրջակայքում բազմաթիվ կալվածներ ուներ ժամանակի ճանաչված դիվանագետ, մեծահարուստ ռուսջուղցի Մանուկ բեյ Միրզայանցը (մահ. 1817 թ.)[13]: Դեռևս Մ. Բժշկյանի այցելության ժամանակ այստեղ ապրել են սակավաթիվ հայ ընտանիքներ[14], որոնք նախապես ունեցել են Ս. Աստվածածին անվամբ փայտաշեն եկեղեցի, որը XIX դարի երկրորդ կեսին վերածվել է քարաշենի[15]: Մանուկ բեյի խնդրանքով նորաշեն եկեղեցին նկարազարդել է Հովհ. Այվազովսկին[16]:

Հնչեշտի հայկական գաղթօջախը մարեց երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում: Հիշյալ եկեղեցին այժմ գոյություն չունի: Քաղաքում պահպանվել են Մանուկ բեյի՝ ռուսական կլասիցիզմի ոճով կառուցված շքեղ պալատը (կառուցել է նրա որդին 1861 թ.), այժմյան գյուղատնտեսական տեխնիկումի շենքը, և Որսորդական տունը, որը կառուցել է ականավոր ճարտարապետ Ալեքսանդր Բեռնարդցին 1881 թ. Մանուկ բեյի որդի Հովհաննես Մուրադ բեյի ծախսով: Այս գողտրիկ շրջանաձև շենքի պատերին ագուցված են մարմարակերտ սալաքարեր՝ բարձրաքանդակներով- որսորդական տեսարաններով: Սալաքարերից մեկի վրա փորագրված է ռուսերեն՝ „MB 1886„[17]:

Մեր շրջագայության ժամանակ՝ 1974 թ. ապրիլի 30-ին, հայոց եկեղեցու նախկին վայրում՝ քաղաքային լճի ափին, կործանված գերեզմանոցից մնացել էր մեկ տապանաքար, սև մարմարից, շրջված վիճակում, որի վրա փորագրված էր ընդամենը 4 տող.

720.

ЗДѢСЬ/ ПОКОИТСЯ ПРАХЪ ВАРТАНА ГРИГОРЬЕВИЧА/ КИРКОРОВА.

Հրատ. *Из истории, 44*

---

13 Մ.Բժշկյան, էջ 188:

14 Նույն տեղում:

15 Տե՛ս Իշխան Հովհաննես Մ.Մուրատ պեկի հոդվածը. «Արարատ», 1870, Օգոստոս, N.4, էջ137-138:

16 Ս.Ռոլանջյան. Հնչեշտ, Հայկ. Խորհրդ. Հանրագիտարան, հ. 5, 1979, էջ 640:

17 Մանրամասն տե՛ս Ա.Խ.Թորամանյան. նշվ., աշխ., էջ 33-39: